

Չարց Ինչպե՞ս է որոշվում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը:

Պատասխան Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային անսում սպառողի առևտրային հաշվիչի գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը հաշվիչի գործակցով (հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալ) բազմապատկելու միջոցով: Եթե առևտրային հաշվիչն անմիջապես գրանցում է էլեկտրաէներգիայի քանակը, որպես հաշվարկային անսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակը: